

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴՐԱՐԱՆԻ

ԿՐԵՊԱՆ

№ 6

1962

ՄԵՍՐՈՒ Վ. Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
(Վիեննա)

ԱՆՏԻ ՏԱՂ ՄԸ ՍՏԵՓԱՆՈՍ ՍԱԼՄԱՍԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԵՆ
Սալմաստեցի տաղեր

379

1935 թվյան Արտավազդ արքեպոս, Սյուրբհյան Հայեակի թիվ 50 ձեռադրին (Տաղարան) նկարագրության առիթով կհայտներ.— «էջ 238՝ Տաղ ըլտեփանոսի կաթողիկոսի Սալմաստեցու ասացեալ.— Եղուկ և վայ է ինձ որ ի յայս հասայ, եաւթին մահու շափ մեղաւք ևս աղտեղացայ. ևս երկար ժամանակաւք...: Ով Ստեփանոս վաթար, ընդէ՞ր դու մեղար, զպատուիրանն...»^{1:}

Հ. Աճառյան ալ իր Հայոց անձնանուններու բառարանին մեջ, Ստեփանոս Սալմաստեցի կաթողիկոսի մասին պատմելով կդրե.— «Նաև տաղասաց է. իր տաղերից մեկը գտնում եմ Զեռ. Հայեակի, Ա. 165 (սրբագրելի՝ 105—Մ. Գ.) նկարագրված Տաղարանում և հետեւյալ ձևով է սկսվում.

Եղուկ և վայ է ինձ որ ի յայս հասայ,
Եաւթին մահու շափ մեղաւք ևս աղտեղացայ,
ևս երկար ժամանակաւք...
Ով Ստեփանոս վաթար
Ծնդէ՞ր դու մեղար,
Զպատուիրանն...»^{2:}

Աշուտ Հովհաննիսյան ևս Առ. Սալմաստեցիի դրական վաստակը ներկայացնեցած ատեն կըսե. «Մանոթ է մեզ՝

Եղուկ և վայ է ինձ, որ ի յայս հասայ
Մահու շափ մեղաւք ևս աղտեղացայ

սկսվածքով նրա դրած տաղը»^{3:}

Վերոհիշյալ հառաջրերումներն Հայունի կլինի որ Ստեփանոս Սալմաստեցի տաղասաց է, և թե իր տաղերեն գոնե մեկը ծանոթ է մեզ. Աճառյան, ինչպես կնշե, իր տեղեկությունը քաղեր է Սյուրբհյանի ցուցակեն, իսկ Ա. Հովհաննիսյան ունէ աղբյուր չէ նշանակած. Սակայն նկատի ունենալով Հովհաննիսյանի նախ լուսթյունը, և երկրորդ, երկու տողերուն թերի մեջբերումը (երկ-


1 Ա. արքեպոս. Միւրմէեան, Ցուցակ Հայերէն ձեռադրաց Հայեակի ս. Քառասուն Մանկունը նկեղեցոյ ևս մասնաւրաց, Ա. Երաւաղէմ, 1935, էջ 105.

2 Հ. Ա. առ այտն, Հայոց անձնանունների բառարան, Գ, Երեան, 1948, էջ 674.

3 Ա. Գ. Հովհաննիսյան, Դրվագներ Հայ աղատազրական մարի պատմության, Բ, Երեան, 1959, էջ 29:

բորդ տողին առաջին բառը՝ «Կաթիրն» ուշագրութենեն վրիպած է), կարելի է եզրակացնել որ ան իր ծանոթությունը առած է կամ Արտավազդ արքեպիսկոպոսի ցուցակին, և կամ ավելի հավանորեն՝ Աճառյանի բառարանեն:

Ստեփանոս Սալմաստեցի մեր նոր շրջանի ազատազրական շարժման ուահպիրաներեն մին է: Ան է որ Հայաստանն ու Հայ ժողովուրդը թուրքերու պարսիկներու ճնշումներեն ու հարստանարություններեն փրկելու նպատակով 1548 թվին ճանապարհարդեց Պոլիս, Վենետիկ, Հռոմ ու Գերմանիա և օգնության խնդրեց արևմտյան տերություններեն: Ան շկարողացավ հասնիլ դրական արդյունքի մը, քանզի Արևմտութքը շեր շահագրգութիւր Հայաստանի ազատազրու-



Էջ մը Սալմաստեցիի տապեն

թյամք, բայց սկիզբը զրավ ազատազրական շափաղանց կարենը շարժման մը, որ շարունակվեցավ Միքայիլ Սերաստացիի և Խորայիլ Օրիի և այլոց ձեռքով: Արդ, փափաքելով Ստեփանոս կաթողիկոսի քերթողական նշխարները հավաքել՝ կատարեցի հետազոտթյուններ և ինձի մատշելի ձեռագրերուն մեջ գտումիայն վերոհիշյալ բանաստեղծությունը, «Եղուկ եւ վայ է ինձ որ ի յայս հա-

սայ»։ Բնականարար սակայն Սալմասուցի միայն մեկ տաղմբ զրած չէ, քանի բանաստեղծական խառնվածք ուներ, կրնար հորինած լինել ուրիշներ ևս, որոնք ապագային կրնան հայտնիի աշխարհացրիկ հայերեն ձեռագրաց մեջ։

Չեղագիրը

Սահմանոս կաթողիկոսի խնդրո առարկա ոտանավորը կզոնի Հալեպի թիվ 50 ձեռագիր Տաղարանին մեջ (էջ 238—241), որ պրված է 1662 թվան՝ Կոստանդնուպոլսու մեջ ի գույն Սամաթիո թաղի ո. Գեորգ Եկեղեցվո (ժականվանյալ Սույու Մանասիթը)։ Մատենիո սուացողն է խոճա Մազուռ։ Կարելի է ենթադրել որ Հեղինակո յուր տաղմբ հորինած է ճանապարհորդությանը ընթացքին՝ ի Կոստանդնուպոլիս։ Եյս մասին ուշ Հիմնական ուվալ չկա։

Եյուրը և արքեօնը

Սալմասուցիի տաղին նյութը մեղքն է։ Ան կհայտնե որ ինք յոթը մահացու մեղքերու մեջ թաթավվեր է, «եւ երկար ժամանակաւք» ալզակա ապրած։ Երկար կիսոսի «եաւթնապուխ» և «մարդասպան» «օֆիշապին» մասին, որ այս տեղ «սատանան» պետք է հասկնալ։ Մեղքերու երկու տեսակներ կթվե, նախ այն մեղքերը՝ զորս մարդ «բնութեամբ» ունի կամ կդործե, և երկրորդ, այլ մեղքեր՝ զորս «օֆիշապը» կնյութե։ Ի վերջո անդրադառնալով որ «զատաւորն» հատուցէ հատմամբ վճռիւ, ինքինը կկշռամբե թե «զպատուիրանն չպահեցիր», զոր դու ընկալար»։ Արդ, այսովհայ բավանդակությամբ տաղ մը անշուշտ բացառիկ հետաքրքրականություն չի ներկայացներ, քանի նման բանաստեղծություններ շատ մշակված են մեր միջնադարյան քերթողներուն կողմանե։ Ի՞ կարծիքով՝ ավելի ուշագրավ է տաղիս արվեստը։ Ի տարրերություն այլ ոտանավորներու, այս մեկը ունի հանգերու զեղեցիկ զանազանություն մը՝ տարրեր տուներու մեջ։—

... այ
... է
... է
... ի
... ո
... իւ
... ար:

Հանգերեն զատ, տողերու մեջ ալ նմանահնչյան վանկերու երաժշտականություն մը կա։ Ասենիք օրինակ առաջին տունը։—

«Եղուկ եւ զայ է ինձ որ ի յայս հասայ,
Եաւթըն մահու շափ մեղամ ևս ազտեղացայ,
Եւ երկար ժամանակամ ի նմա բնակեցայ.
Ուստի վիրաւորեցայ՝ մահու մասնեցայ,
թշնամոյն նախատեցայ եւ ոչինչ զրտայ։»

Տողերը առհասարակ կրապկանան 12 վանկերե և ունին 7—5 հատավորություն։

Հետաքրքրական է որ տաղս խաղաղրված է: Ըստ ինձի, իր տիսուր նյութին և արվեստի գեղեցկության պատճառով ժաղովրդականացած բանաստեղծություն մըն էր սա, որ կերպիեր թաղումներու ժամանակ, ինչպես Առաքել վարդապետի «Առ ձեզ գոշեմ ձայնիւ մեղայ» երգը, կամ Մկրտիչ Նաղաշի «Արարիչն արարածոց մեղ բարկացաւ» ողբը, կամ Քերովը եի «Երեկ հողմերօն անցի» մեղի տաղը:

Ժամանակը

Ե՞րբ է զրված քննարկվող տաղը: Երկու կետեր կան, որոնք մեզի կօժանդակեն մոտավոր կերպով ճշտելու այս շարքը: Նախ, բացահայտ է որ Սալմաստեցի իր կաթողիկոսության շրջանին զրած է ողբը, ոչ միայն որովհետեւ վերնազրին մեջ կըսվի «Տաղ Ստեփանոսի կաթողիկոսի Սալմաստեցոյ ասացեալ», այլ վասնվի վերջին տունին մեջ հստակորեն կըրե՝ «զրառակի աւծումն տեր առաքելարաբ»: Առաքելական շորս օծումները պիտի հասկնանք սարկավագության, բահանայության, եպիսկոպոսության և կաթողիկոսության ձեռնադրությունները, կամ ավելի հավանորեն՝ զրոշմի, բահանայության, եպիսկոպոսության և կաթողիկոսության օծումները: Երկրորդ կետը՝ տաղին մեջ արտահայտված հոգետեսական տրամադրությունն է: Մէնք գիտենք որ Սալմաստեցի հոգնեցուցիչ և մեծածախս ճամփորդություններ բրավ ի խնդիր հայ աղջի ազատագրության, սակայն էջմիածին դարձավ հուսախար և հուսահատ, որովհետեւ Արևմուտքը անտարբեր գտնվեցավ իր առաջարկություններուն նկատմամբ: Աւստի, կարելի է ենթադրել որ Ստեփանոս կաթողիկոս իր վերջին օրերուն, շուրջ 1551—1552 թվին, տեսնելով իր երազներուն փլուզումը և մահվան մոտենալը, զրեց ներկյալ ողբը, անոր մեջ արտահայտելով իր անձին և աղջին վշտակիր հոգիպիճակիր:

Տաղ Ստեփանոսի¹ կարուղիկոսի² Սալմաստեցոյ³ ասացեալ

Եղուկ եւ վայ է ինձ որ ի յայտ հասայ,
հաւթին մահու շափ մեղաւք եւ աղտեղացայ,
եւ երկար ժամանակաւք ի նմա բնակեցայ,
ուստի վիրաւորեցայ՝ մահու մատնեցայ,
5 թրշնամոյն նախատեցայ եւ ոչինչ դրտայ:

Եւ եսութեազգուխ վիշապըն⁴ զիս վիրաւորէ,
հաւթին բղգայութեամբ⁵ մարմնովըն զիս խոցոտէ,
զորբս բնութեամբ ունիմ եւ զորբս նա նիւթէ,
մարմնով, հոգով⁶ եւ մրտաւք միշտ տպականէ,
10 իւ ի յարարչէն իմմէ հեռացուցանէ:

1 — 2. «ԲՍտեփանոսի»:

2 — 2. «Սալմաստեցոյ»:

3 — 2. «Վիշապն»:

4 — 2. «Բրայութեամբ»:

5 — 2. «զորբ»:

6 — 2. «Հոգով»:

Եւ զերկոտասան բզիառս Աղամ՝ զգեցեալ է,
և աւթեարփիան շնորհաւք հոգւոյն⁷ նա զարդարեալ է,
վիշապն այն որ ի սկզբանէ մարդասպան է,
նախանձեալ ի փառս նորս խարծամբ⁸ զնա⁹ պատրէ,
15 և փառաց կենցաղ դրախտէն բզնա¹⁰ արտաքսէ:

Որպէս նախնին մեր Աղամ ի նմանէ մեղանչի,
մահու ապականութեամբ և դժոխոց զերի,
զմեզ եաւթեաւտկեաց ի նոյն և միշտ յայն վարի,
մինչ կատար ժամանակի՝ վախճան¹¹ աշխարհի,
20 նա¹² սորտաւք վարի ընդ մեզ և ոչ պատկառի:

Տէր փըրկեա զմեզ ի նմանէ դու և ապրեցո¹³,
զի զընեալ արեամբ ծառայ եմք միածնի քո.
աստ ըզմեղըս մեր զընցեալ և անդէն կեցո¹⁴,
զի մի մատնեցացց Հըրոյն անշիշանելոյ¹⁵,
25 յորդ և միշապըն հրեղէն՝ ատամամբ սրբոյ:

Որդիք խաւարի բարձեալ զգեհենի նիւթ խախ¹⁶,
զմեղըըն զոր զործեալ ետուք սատանայ բանիւ
կամ զոր ինքնամք զործեցին բնութեամբ խըրատիւ,
զատաւորըն հատուցէ հատմամբ վրձրուի,
30 արտաքսէ զնոսա¹⁷ ի բաց մեծաւ հրամանիւ:

Ով Ստեփանոս¹⁸ վաթար, ընդէ՛ր զու մեղար,
զպատուիրանըն շոկահեցիր զոր զու ընկալար,
զքառակի աւծումն առեր առաքելարար,
զի զու արդ տացես համար զոր շառ ընկալար,
35 զի անդէն շունիս քանիքարն զայն շահարար:

7 — 2. «Հոգոյն»:
8 — 2. «Խափմամբ»:
9 — 2. «զնայ»:
10 — 2. «բզնայ»:
11 — 2. «վաղքան»:
12 — 2. «Նեյ»:
13 — 2. «ապրեցու»:
14 — 2. «կեցոյ»:
15 — 2. «անշիշանելոյն»:
16 — 2. «խըրու»:
17 — 2. «զնոսայ»:
18 — 2. «Ստեփաննուր»:

МЕСРОБ Г. ГРИГОРЯН

(Вена)

(Р е з ю м е)

НЕИЗДАННОЕ СТИХОТВОРение СТЕПАНОСА САЛМАСТЕЦИ

Единственное ныне известное стихотворение католикоса Степаноса Салмастеци находится в армянской рукописи от 1662 г. (написана в Константинополе), хранящейся в Халебе (рукопись описана в «Каталоге» А. Сюрмеля за № 50). Издатель стихотворения, остановившись кратко на обстоятельствах, при которых оно было написано, дает оценку его художественным достоинствам и приходит к заключению, что стихотворение, вероятно, относится к последнему периоду жизни Степаноса Салмастеци (1551—1552 гг.).

MESROB G. GRIGORIAN

(Vienne)

UNE POESIE INEDITE DU CATHOLICOS STEPHANOS DE SALMAST

La seule poésie que nous connaissons du catholicos Stéphanos de Salmast se trouve dans un manuscrit arménien composé en 1662 à Constantinople et conservé à Alep. (Le manuscrit est décrit dans le Catalogue de A. Surmeyan et porte le n° 50).

Nous lisons ici cette poésie. L'article nous retrace brièvement les circonstances historiques qui lui ont donné naissance. L'art nous en est révélé. L'auteur estime en conclusion que cette poésie date probablement de la dernière période de la vie de Stéphanos de Salmast (1551—1552).